



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format


Adapt — remix, transform, and build upon the material

ՀՈՎԻԿ ՄԵԼԻՔՅԱՆ

# ՄԻ ԿԻՆ ԳՆՈՒՄ Ե...

ՀՀ 036

A 39215



ԽՍՀՄ ԺՈՂՈՎՌՈՒՐԴՆ. ԿԵՆՏՐ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
1930

Главлит А—77175

Заказ № 2985

Тираж 6.000


Книжная ф-ка ЦИЗ'а СССР, Москва, Шлюзовая наб., 10.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՃՐԴԱՅՆԱՑՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՄՆԱՄՅԱԿԻՆ—

Գրքույկս վորպես արծան դըվում ե  
բոլոր այն անհայտների շիրիմներին,  
ովքեր 1920 թվին զոհվեցին Հա-  
զախի լեռներում անտառոտ, կիրճներում մթին՝  
գիշատիչ դաշնակցության ճիրաններում խո-  
ցոտված մեր յերկրում աշխատանքի  
կարմիր իշխանություն հաստատելու  
համար:

1930 թ. նոյեմբեր  
Մոսկվա

A II  
392/5



Шаг держи революционный,  
Близок враг неугомонный.  
Ал. Блок.

## ՄԻ ԿԻՆ ԳՆՈՒՄ Ե...

### 1.

Կածանը նման ե կեռ ու մեռ պառկած ոճի:  
Եշով ճամբորդող կինը ուշադրությամբ նայում է  
կածանին ու շուրջը: Խսկապես, կարծես թե կածանը  
մի յերկար ոճ ե՝ պոչը ձորումը, գլուխը սալի  
կատարին:

Դիշերը ձյունը բարակ քող ե քաշել սարի թփուտ  
փեշերին: Կածանը ծածկվել ե ձյունով: Թարոտ կա-  
ծանում գիշերն իջած ձյունը ցերեկը ջերմ արևի  
համբույրների տակ հալվել ե: Յեզ եշի պոչը բռնած  
կինը փափուկ ցեխ կոլսկրտելով ե գնում:

Սիրուն ե սարի կատարը, յերբ նա ծածկված ե  
ձյունով ու արևի շողերը խաղում են ձնի յերեսին:  
Սիրուն են բարձրանիստ սարի թշերը՝ շողուն ու խա-  
լապատ: Եշով ճամբորդող կինը նայում ե հրաշագեղ  
լեռներին ու հիանում նրանց գեղեցկությամբ: Նայում  
ե, ուզում ե ինչ վոր ծանոթ բան գտնել: Մի քանի  
վայրկյան նա ուղախ ժպտում ե: Թվում ե, թե մի բան  
հիշեց նա... Սարի կատարը նրան ծանոթ ե... Փոք-  
րիկ եր, ընդամենը վեց տարեկան:

Նրա արևատես դեմքը հանկարծ դալկանում եւ Գունատ դեմքով կինն այլս շուրջը չի դիտում։ Նա գլուխը կախում ե, մի ձեռքը դնում ե եշի նոր փալանին ու հրում։

— Թհշշե, թհշշե։

... Շոյող նայվածքով դիտում ե եշի նոր փալանը։ Մայրական դթով, նուրբ մատներով շոյում ե փալանը։ Աչքերը կայծեր են մաղում փալանի վրա։ Եշը յերկար ականջները թարթում ե։ Թվում ե, թե նա խոկապես շոյանք զգաց ու վոգերվեց։ Փոշտացնում ե, տրնզի տալիս, պատառութված շրջազգեստ հագած կնոջ հրամանը կատարում։ Եշը քայլերն արագացնում ե։ Ճնճղուկները ձյունով ծածկված թփերի տակ խառնում են չոր տերեններն ու թռչկոտում։ Տերենները սվավում են, խշխշում, ճրթճրթում։ Նրանք դանակում են ճամբորդ կնոջ սիրտը։ Նրան թիւում ե, թե իրեն հետեղ կա։

Կածանով անցնող կինը յերիտասարդ ե, հազիվ քսանինդ տարեկան։ Եշը յերբ դանդաղում ե, յերիտասարդ կինը ջղայնանում ե, պոռշները կրծոտում։ Նա խուսափում ե բարձր ձայն հանելուց։ Շագանակագույն աչքերով յերիտասարդ կինը սիրում է լուռ լինել ու միշտ եշի փալանին ե նայում։

Ո՞վ ե այդ խորհրդագոր կինը։

Լեռնոտ յերկիրը հղի յե։ Յերկրի կողերը հղի կնոջ կողերի պես ցավում են։ Յերկիրը հրդեհված ե քաղաքացիական կոփմսերով։ Մարդուս կյանքը ամեն մի վայրկյան վտանգի տակ ե։ Լեռներում ու ձորերում տղամարդիկ տասնյակներով են կորչում։ Ու յերիտասարդ մի կին, ահը կտրված, մենակ ճամբոր-

դում ե արնոտ լեռներում։ Խնչպես յերեսում ե սրտոտ  
կին ե։ Կամ գուցե բեզարել ե ապրելուց։

Յերիտասարդ կինը սարից վար ե իշնում։ Նա  
պետք ե մտնի Բոխուտի ձորը։ Զորն ի վար ութը  
վերսոտ պետք ե գնա, վոր իրիկնապահին հասնի գյուղը։  
Զորում մոնչում ե լեռնային վտակներից հյուսված  
գիտ գետը։ Գետի վրայով կառուցված ե քարե հոյա-  
կապ մի կամուրջ։ Կամուրջը բարձր ե ու զարգանդ։  
Յերիտասարդ կինն եշի պոչը բռնած հասնում ե կա-  
մուրջին։ Նա նայում ե առաջ՝ կամուրջի ծայրին ու  
կրկին գունատվում։ Լեռան՝ լճակի պես խաղաղ ու  
մարդարտաշող աչքերը փոթորկվում են։ Նրա փոթորկ-  
ված աշքերում այդ ժամին նաև կիսորտակվելին։ Յեզ  
նրան այնքան հուղեցին, կամուրջի ավին, մոսին-  
ներով, կողք կողքի նստած յերեք տղամարդը։

Եշով ճամբորդող կինը գիտե, թե ովքեր են կա-  
մուրջի ծայրին նստած տղամարդիկ։ Նրանք հայ հա-  
րուստի ու խանությանի քսակը հսկող արթուն պա-  
հակներն են։ Կամուրջը պաշտպանում են, վոր բոյլ-  
շեկացած շրջանից վտանգավոր մարդիկ շանցնեն  
դեպի յերկրի ներսը։

Հասնում ե նրանց։ Եշը կանգնում ե։ Կինը տա-  
տանվում ե։ Ուզում ե յետ դառնալ։ Բայց չե, արդեն  
նրանք տեսել են, պետք ե գնալ։ Գետը ե գնալ և  
այն ել վճռական ու անվախ քայլերով։

... Գնում ե։

## 2.

— Թհշշե, թհշշե, գլուխող հողեմ, վազիր հա — եշի  
վրա բարձր բղավում ե պատառոտված սև աղլուխը

կապած կինը։ Նա շատ համարձակ ու հանգիստ ե-  
ձեացնում իրեն։ Իբր թե սրտումն ան չկա, կամուրջի  
ծայրին նստածները հաղում են։ Վորակես թե կոկորդ-  
ները մաքրում են։ Ցածր բոյով, մազոտ դեմքով,  
մոսինը բռնած մի տղամարդ մոտենում ե կնոջը։

— Անոնց, քեւըս, ուր ես գնում։

«Անպիտանն ինչքան քաղցր ե խոսում — ինքն  
իրեն ասում ե ճամբորդ կինը։ Հետո, նա մատը ձորն  
ի վար մեկնում, ցույց ե տալիս։

— Գնում եմ՝ անյ են շենը, մեր բարե կամի տունը։

— Քուրս, ով ե ձեր բարեկամը, դու վեր  
շենիցն ես։

Եշով ճամբորդող կինը գլուխը կախում է։ Նա հաս-  
կանում ե, վոր մազոտ գեմքով մոսինավորը խորա-  
մանկություն ե անում։

— Ցես սարի զլիսի Թաղ շենիցն եմ։ Տեսնում  
ես, վոր ձորի Կալերն եմ գնում։ Մեր բարեկամը  
վանունց Մակիչն ա։ — Իսկ Վանունց Մակիչը, ձորի  
բերանին փոված գյուղի հայտնի հարուստներից մեկն ե։

Մյուս հրացանավորներն ել են մոտենում։ Մա-  
զոտ գեմքովը նրանց ականջին փսփսում ե։

— Թաշշե, ճամբա տվեք գնամ, մթնում ա։

— Ասում ես, սարի շենիցն եւ՝ շատ լավ, համա-  
չար սատանան քոռանա, մի գեղիցն ենք ու իրար  
ճանաշում չենք։ Իսկ մարթ՝ այսինքն ամուսին ունես։  
Ի՞նչ ե մարթիդ անումը։

— Մարթիս անումը, քեզ ի՞նչ։

— Ցական, — ընկերներից մեկին աչքով ե անում  
առաջին խօսողը, վոր ինչպես յերեսում ե յեռյակի  
ղեկավարն ե։

— Ես սհաթիս, — առաջ ե թոչում Ցականն ու կնոջ  
թեփը բռնում, — զանջղ, վոնց թե քեզ ինչ, միջիցդ  
երկու կես կանեմ: Դուզը խոսիր, Խատիսովից հրա-  
ման ունենք, վոր քեզ պլեն փոնենք:

Եշով ճամբորդող կինը հուզված եւ Նրա ներսում  
կատաղի պայքար եւ ինչ վոր լուրջ ու վտանգավոր  
հարց ե վորոշում: Մաշած կուրտկայի տակ թագնված  
բարձր կուրծքն արագ խաղում եւ Իսկ Ցականը բե-  
խերը լիզելով նայում ե կանացի թփրտող փափուկ  
կըծքին ու վտավստում...

— Մարթս... անումը Մեխակ ա:

— Ձեր շենումը եղ անումով մարդ չկա, — խո-  
րամանկ ծիծաղելով ասում ե Ցականը:

— Տղերք, ձեր արեով յերթում եմ ուտում, հա-  
վատացեք, իրեք ամիս ա կնդա պաս եմ պահում,  
աստված տվալ, թաժախսվելու թիքան ինքն իրան  
վոտով յեկավ... Յեկ մամրալ... Յեկ ջենյրան...

Ծիծաղում են:

Եշով ճամբորդող կինը նայում ե վար՝ փրփրաբե-  
րան գետին: Գետը և սիրուն եւ զարզանդ, Կամուրջի  
տակ ջրերը դժժալեն զարնվում են ժայռին ու գո-  
հարների պես սիրուն կոհակներ են ցրում քարերին: Գետը  
բերանն ընկածին կտանի: Իսկ կամուրջից ընկ-  
նողը տոլմի ծեծած միս կդառնա:

— Դու են ասա, մարթդ բոլշեիկ ե, թե դաշնակ-  
ցական, — հարցնում ե մազոտ դեմքովը:

— Խնթրում եմ, պաց թողեցեք գնամ, գեղըցի  
անկիրթ կնիկ եմ, բոլշեիկից, դաշնակ-մաշնակից բան  
չեմ գիտում, — իրեն հավաքելով պատասխանում ե  
Եշով ճամբորդողը:

Յեռյակի՝ պետը, բնիսերը սղալելով, եշավոր կնոջը  
բացատրում ե, թե ովքեր են դաշնակցականները, և  
ովքեր են բոլշևիկները:

— Քնուրս, բա, բա, բա, ամոթ ե, վոր քու բա-  
րեկամին ու դուշմանին ճնաշում չես: Բա յես նրանց  
են,... Հազար տարի թուրքն ու ոռւսը հայի վզին  
դեվի նման նստել են, միսը կերել, արինը խմել:  
Համա հայը յեզան պես ուսը դեմ ե տվել, համբերել:  
Մի որ դանակը վոսկորին ե հասել: Հայի համբերու-  
թյունը հատել ե: Նա թռել ե, թշնամու ձեռքից մո-  
սինը խլել ու նրա դոշին դեմ արել: Ասլանի նման  
մարթ ե ըլել եղ հայը՝ միլիոնատեր Մանթաշովին  
լայեղական իգիթ: Եղ որվանից հիմք ե ղրվել հայ  
հեղափոխական դաշնակցությանը: Ուստին ու թուր-  
քին դաշնակցականը մեր հողից դուրս ե արել, վոր  
հայի յեկեղեցին քանզեն վոչ, վոր դյուքյանչու մա-  
ղաղինը թալանեն վոչ, վոր հայ միլյոնչու դավողը  
խլեն վոչ: Դաշնակցականը, — այ, են կաղնու նման  
բարձր բոյ ունի, նրա բնի նման հաստ մեջք, ճյու-  
ղերի նման ամուր կոներ: Նա ենքան զվաթով ե, վոր  
առջի հետ կոխ կանի: Այ, ինձ յաշի, տես ինչ տղամարդ  
եմ: — Քեզի ծայրը ջղային քաշում ե բերանը, ծամ-  
ծմում ու շարունակում: — Քնուրս, հիմքի յել բոլշևիկին  
մտիկ արա: Բոլշևիկն ասում ե՝ յեկեղեցին սուստ ե,  
հայ ու թուրք չկան, պոլորն ել մեկ են, ախապեր են: Ասում ե՝ մաղաղինն ու զավոդը հաջուսատից պետք ե  
խլել, տալ ժողովրդին, վոր ուստի չաղանա: Հողը՝ ըե-  
կից սկազմա խլել, տալ քյասիք, անխելք ու անշնորք  
գեղըցուն: Մի խոսքով, բոլշևիկն ուզում ե աշխարքը  
քանդի: Համա մենք թող չենք անի: Մեր գլուխը մե-

ուած չի, վոր մուսավաթի շպիռն բոլշևիկները գան  
Հայաստանը քանդեն: Թաւրս, բոլշևիկ չես տեսել:  
Հաղար ափսոս: Յես մի յերեսուն բոլշևիկի գլուխ  
թոցրած կլեմ: Բոլշևիկը՝ ենքան փոքրն ե, վոր հազիվ  
արշին ու կես բոյ կունենա՝ պուճուր մարթ ե, լղար,  
դեմքը փխրած, վոր քթին փշես հոքին դուրս կգա:  
Կատն են ե, վոր ետ շները շատ են:

Յերիտասարդ կինը, վորքան փորձեց զսպել, չեղափ,  
չկարողացավ համբերել ու ծիծաղեց: Կուշտ ծիծաղեց,  
հետո դարձավ մոսինավորին.

— Իմ մարթը, դրանցից վեչ մեկն ել չի, — հա-  
մարձակ պատասխանեց նա:

— Եղ ժամանակը քու մարթը իշու քուռակ ե:

— Իշու քուռակն ինքդ ես — բարձրացավ կնոջ  
ձայնը, նա վորոշել եր միշտ ել համարձակ լինել:

Մազու դեմքով մարդը համարձակ կնոջն ապտա-  
կեց ու զրկելով նրան՝ փորձեց թեքել: Կինը չընկճիեց:  
Նա զգաց, վոր մի զարհուրելի թակարդ ե ընկել, վորտե-  
ղից անփորձ փրկվելու միջոց չկա: Իմացավ, վոր պետք  
ե ըռնաբարեն իրեն, գուցե և սպանեն: Այս, աղմուկից  
խուսափելու համար կսպանեն: «Պետք ե մեռնեմ, գոնե  
ցույց տամ... Բայց գուցե պյուղը տանեն... չե, կսպա-  
նեն»: Յերիտասարդ կինը ինքն իրեն այսպես մի քանի  
հարց տվեց ու պոռշը կծեց: Վարժ ըմբիշի նման զըլ-  
խով զարկեց յեռյակի ոլետի կրծքին: Պետը զլիսի վրա  
ցցվեց կամուրջի տակ՝ ջրերի հանգույցում:

### 3.

Նշով ճամբորդող կինն աչքը բաց արեց ու փոր-  
ձեց շուրջը նայելու: Տնքաց: Վիզը չշարժվեց: Նրան

թվաց, թե մազերից հարյուր փթանոց քարեր են կապած, իսկ կրծքին մի մեծ սար կա նստած։ Ականջները չեն լսում։ Վոտքերը կպած են իրար ու չեն հեռանում։ Տրորված կինը մեկ ել նկատեց, վոր մեկը մոտեցավ ու գլուխը բարձրացրեց։ Գլխի տակը քար դրին։ Աշքերը կրկին բաց արեց։ Իմացավ — գյուղում եւ։ Տներ, ծառեր, շներ, մարդիկ, Մարդիկ գլխի վրա կանգնած են յերեսում, շները յերկու գլխանի։ Քիչ հետո աչքերը պարզվեցին։ Նկատեց, վոր գյուղի կենտրոնումն եւ։ Ձեռքերն ու վոտքերն ամուր կապած են։ Հիշեց, նրան այդպես կամուրջում են կաշկանդել ու եցի պոչից կապել, գյուղ քաշ տվել։

Կարծես թե ծանոթ մարդիկ յերեսացին։ Վորտեղ ետեսել նա այդ մարդկանց։ Մտերիմ, հարազատ են յերեսում։ Նա ուզեց նայել, ժպտալ, բայց չկարողացավ։ Մեկի հայացքը բռնեց. այնքան հարազատ եր, այնքան դուրեկան... «Ո՞վ ե նա»։ Գյուղացիները մոտենում են, նայում ու գունատված հեռանում։ Յեկավ և նա՝ աչքերը կարծես թե հրդեհված ձորեր են։ Վայրկյանը մի անգամ նրա գույնը փոխվում ե, դողում ե... Տրորված կնոջ մարմնով ուրախություն տարածող վարար մի հոսանք անցավ։ Ուրախությունից ուզեց ճշալ։ Գուցե և կանգներ, գրկվեր ու համբուրվեր։ Բայց մարմնի մասն ը չշարժվեցին։ Հազվի, լսելի ձայնով շշնջաց նա իրեն մոտեցած տղամարդուն։ — Եեեշիի... փալան... Աարբտաշես...

Իսկ իշխանապահին գյուղի պատերին ձեռքով զրած կոչեր յերեսացին։

Գյուղացիներն մոտենում են այդ կոչերին նայում և առանց կարդալու յետ դառնում։ Դեռ մութը

չի պատել: Կայազորի պետի հրամանով դպրոցի բակն են հավաքվում մոթալ փափախով զյուղացիները: Տղամարդկանց շարքերում մեկ-մեկ յերեվում են գեղջկուհիներ՝ վոաներին տրեխներ, հագներին բրդի կողիտ գործվածք: Նրանք իրար գլխի թափված շնչակուր նայում են դպրոցի կապույտ պատշգամբին:

Մանիշակագույն հասարի յետեից ճառում ե բարձրահասակ մի տղամարդ: Նրա հազին անգլիական սպայի հագուստ ե, գլխին ցիլինդր, իսկ վոտքերին կովկասյան թեթև յերկարավիզ կոշիկներ: Նրա ճառը պղտոր, փրփրաբերան սև լավի նման աղմկոտ հոսում ե: Ցերկար ձեռքը մեկնում ե դեպի հյուսիս ու գոռում.

— Աղատարար! հայ-հեղափոխական դաշնակցության անունից հայտնում եմ, վոր միլիոնների արյան գնով ձեռ բերած մեր սուրբ ազատությունը վտանգված ե... Հանրապետության ամեն մի դավակ պետք ե ոգնի իր հարազատ պետությանը, յերկրի ներսի աղտը՝ կամ բոլշևիզմը արմատախիլ անելու և հյուսիսից յեկող բռնակալներին դիմադրելու, նրանք իրենց գաղանային գործերով գերազանցում են Լենգ-Թեմուրից, Զինգիկ-խանից, Շահ Աբբասից ու Սուլթան Համբաղից... Նրանք մեզ ու մեր զավակներին կխորովեն...

Ծիլ նորով սպան բառերի կարկուտ ե թափում: Իսկ մոթալ փափախով գյուղացիները քթների տակ մըթմըթում են:

— Պարուն Արշակ, դու մեզ խափողը չես, են վաղ եր, վոր եշը կաղ եր: Սա են ժամանակը չի, վոր քասիք գյուղացին քեզ լսում եր, թուրքի դեմ կովելու համար, թուի ու թվանք առնելու ոգտին փող

հավաքում, ջիբդ ածում։ Սուտ ես խոսում։ Ես պետությունը քունն ա՝ Մեծլում-բեզի տղա Լըշակինը, նրա ամինն ու դայինը։

— Ո՞ձ... ոձի տղա... Հազար դեսետիններով անտառ ու հող ունեք, ընչի յեզ մի որավար հողի կարուտ գեղըցուն ձեզ հավասարեցնում... Դե յեթե պետութենը հավասար պոլորինս ա, թող ծեր անտառը մեզ հետ բարաբար կես անի... Թող հողը պաժին անի...»

— Մենք հաղաղություն ենք ուզում։ Դաշնակցության ռեխը հաղաղություն տվող չի, փորցել ենք։ Ասմանլիի հետ կովում ա, Վրացտանի դեմ կովում ա, Աղբբեջանի դեմ կովում ա, բոլշևիկի դեմ կովում ա։ Լավ, բա ել մւմ հետ պետքմա բարիշ մնաք, ըրեվում ա Նիկոլ Թագավորին եք ուզում։ Ո, ինչքան ուզում ես թուքտ ցրիվ տուր, բղավի, անոքուտ կանցնի։ Բոլշևիկին պտի փորձենք, հույսով ենք, վոր նա մեզ հաղաղություն կտա։

Գյուղացիները խոսում են իրար մեջ ու կամաց։ Իսկ ցիլինդրավոր սպան նույն տեղը կանգնած շրունակում ե իր ճառը։

— Հայ-հեղափոխական դաշնակցության հերոսական պայքարը ժողովրդին ազատություն ու կյանք բերեց։ Բայց հավատուրաց մի քանի զույգ հայեր մտել են ժողովրդի սիրտը և խլրտումներ են զցում։ Նրանք ցանկանում են թրքակտն մուսավաթին վաճառել մեր սուրբ աղատությունը։ Պարլամենտի անունից կոչ եմ անում բոլոր ազնիվ հայերին՝ — գնդակահարել այն մարդկանց, վորոնք բոլշևիկյան մտքեր են տարածում, հայաստանի և հայ պետության դեմ դավեր են լարում։

Բոլշևիկները շատ խորամանկներն են ու այդ  
հասուլ ե հուղաներին։ Սահմանները ամբացըել  
ենք հավատարիմ զինվորների շղթաներով, վոր  
Աղբբեջանից մուսավաթիստ բոլշևիկները չանցնեն  
մեր կողմը։ Թիկունքի կենտրոնական ամեն մի գյու-  
ղում մի գունդ դորք ունենք։ Ամեն մի գյուղի չորս  
կողմերում տեղացի հավատարիմ ընկերներից պահակ-  
ներ ունենք։ Ցեվ այդ բոլորից հետո թշնամին  
դարձյալ կարողանում ե մտնել յերկրի ներսը։ Բոլշ-  
ևիկները գունավորվում են՝ վոտաբորիկ ձյունն կոխ-  
ճրտելով ճամփա յեն կտրում՝ իրենց չար նպատակի  
իրագործման համար։ Պարզվել ե, վոր այսոր, առա-  
վոտյան, Բոխուտի ձորում, ձեր գյուղացի ու մեր քա-  
ջարի ընկեր Սոկրատին սպանող կինը, ձեր գյուղացի  
Հայկ Սուլթանյանի աղջիկն ե՝ հայտնի բոլշևիկ Ար-  
մենուհին։ Այդ միրը թագնվել ե աղնիվ ու քրտնա-  
ջան գեղջկուհու շորերում, վոր խարի մեզ։ Վոճրագործ  
լրտեսը վաղը մահվան կդատապարտվի։ Ձեր պահան-  
ջով չենք ների նաև նրա հորը, վոր կասկածվում ե  
բոլշևիզ...

Ցեվ ցիլինդրով սպան «բոլշևիզմ» բառը գեռ լրիվ  
չարտասանած, մի զինվորական մոտեցավ նրան.

— Բոլշևիկ կնոջ հետ բերած եշի փալանը վրան  
չի։ Գաղտնի թղթեր են յեղել մեջը։

Մանիշակագույն պատշգամբից ցիլինդրավոր սպան  
գար իջավ։ Մասուզերը նա խսկույն հանեց։ Ռազմա-  
կան շտաբի դուռը շրիկացրեց ու ներս մտավ։ Իս-  
կույն կարգադրեց.

— Սպաներն այս ըուղեյիս թող հավաքվեն նիստի։  
Մի վաշտ գնում ե գյուղը շրջապատելու։

Պապիրոսը քերնին, անգլիական հագուստով սպան դուրս յեկավ շտաբից։ Նա ղիմեց պատշգամբում կանգնած ջոկապետին։

— Խորեն, այս ըոսեյիս շրջապատում ես Հայկ ու Հակոբ Սուլթանյանների տունը։ Նավթ կամ չոր խոտ ճարեցեք։ Այդ տունը պետք ե հրդեհվի։

— Իսկ ընտանիքը, կին, յերեխա, — հարց տվեց յերեք մատը փափախի ծայրին ղրած, մսագործի անդուրեկան աշքերով ջոկապետը։

— Դուրս թափեցնք... Կամ կարող եք միանգամից հրդեհի մատնել... Ինչպես կհաջողվի։ Պետք ե գյուղը ահաբեկել։

— Լսեմ եմ, — մարդ գլխատելու համար միշտ պատրաստ դահճի հաճույքով պատասխանեց ջոկատապետը։ Գնաց պետի հրամանը կատարելու։

Ռազմական իշխանության ղեկավարներն ամեն մեկը մի դասակ զինվոր վերցրած, խուզարկություն են կատարում։

Եղի փալանն են փնտրում։

Ծիլինդրավոր սպան կարգադրել ե՝ վոչ վոքի չխնայել։ Դիմադրողին ծեծում են, փախչողին կրակում։ Յերեխանները հեկեկալով փախչում են դռնից դուռ ու անոգնական ճշում...»

Կայազորի պետը, նախկին ուսուցիչ Արշակ Մեծլումբեկյանը՝ կամ ցիլինդրավոր սպան, մի դասակ զինվոր յետնից, անից տուն շրջում ե։ Ահա մոտեցավ նա Մուքելանց Բագրատի տանը։ Բագրատը չքավոր գյուղացի յե։ Տարիներ առաջ Սև քաղաքում բանվոր

Ե յեղել: Թեվը տվել ե մեքենային ու կոնսատ վերադարձել գյուղ: Այն որվանից հասարակական հոտաղ ե: Այժմ կասկածվում ե բոլշևիկյան ընդհատակյա կազմակերպության պատկանելու մեջ: Փաստ չկա, Բագրատին չեն կարողանում բռնել, միայն կասկածում են: Յերբ հասան Բագրատի սրահին, ցիլինդրավոր սպան կանգ առավ, զինվորները ներս մտան տուն: Բագրատի ութ տարեկան աղջիկը սարսափից ճշաց ու դուրս թռավ տնից... Ուղիղ տան շեմքին՝ ցիլինդրավոր սպան մառւղերը դրեց դեռ կոկոն աղջկա ճակատին:

«Թրբախկ»...

Փոքրիկ դիակը կոխկրտելով, սպան ներս մտավ տուն: Տանը մարդ չկար, իսկ տնամեջը զինվորները տակն ու վրա արին: Այս անգամ փոքրիկ դիակը կոխկրտվեց տնից դուրս յեկողների բոլորի կողմից: Մի յենթասպա, վոր վերջիններ դուրս գալիս անմարդ տնից, վոտքը դրեց դիակի մեջքին, թե չե, մի կացին յետնից իջավ գլխին... Յենթասպայի զինակիցներն իրենց ընկերոջ դիակի վրայով յետ դարձան ու տունը հրի մատնեցին: Բոլորը գնացին՝ հետները տանելով յենթասպայի դիակը: Բոցերի մեջ մաց միայն ութ տարեկան աղջիկը:

Բագրատի տունը հրեղեն լեզուներ մեկնեց դեպի յերկինքը և կարմրավուն լույս փոեց իր շուրջը:

Սուլթանանց Հակոբի այրվող տնից, խավար ծխի միջից դուրս յեկավ պառավ մի կին: Պառավը չորեքթաթ տալով գնում ե ու նայում յետեւ: Պառավը յերկի ուղում է իմանալ, թե իրեն չեն հետեւում:

— Մինչև տունը մոխիր չդառնա, վոչ մի քայլ չհեռանաք, — հրդեհված տունը շրջապատած զին-

վորներին կարգադրեց մսագործի աչքերով ջոկապետը:

Չորեքթաթ տալով գնացող պառավը լսեց ջոկապետի հրամանը: Մարսափեց: Մահվան անը նրա համար այս անգամ ավելի մեծ եր, քան այն ժամանակ, յերբ գտնվում եր հրդեհված տան սրահում, ծխի մառախուղի մեջ: Դարձյալ չորեքթաթ տալով, դողալով շտապեց առաջ... Յեկ մահվան ճիրաններից փախչող պառավը չնկատեց, թե ինչպես ճամբից դուրս յեկավու հասավ իրենց բակի առաջ, ձորի բերանին, ժայռի վրա կառուցված տեր-Վարդանի տան ցեղքին: Պառավը վտանգը չնկատեց: Յերկու ձեռքը պարզեց առաջ, չորեքթաթ առաջ գնաց... Վարում, ժայռի տակ լսվեց մի խուլ թմիոց և ուրիշ վոչինչ...

Գյուղը վիրավոր մռնչում եւ: Մի փոքրիկ կայծ — ու ամբողջ գյուղը վառողի նման կպայթի:

Մինչդեռ իշխանությունը խուզարկությամբ եր զբաղված, կալանատնից բոլշեիկ կինն ու պահակն անհայտացան: Նրանց փախցրին, Յիլինդրավոր սպան այդ դեռ չգիտեց: Խուզարկությունը շարունակվում եւ իսկ ավերումի այդ ժամին, գյուղի ծայրին, Ստեփիանանց ջրաղացը խորհրդավոր մարդիկ են հավաքվում:

Թելագործ, զինվորական փափախով, հաստ շրթունքներով այն մարդը, վոր իրիկնապահին մոտեցավ տրորված կնոջն ու փալանի մասին տեղեկացավ, ատրճանակը ձեռքին կանգնած ե ջրաղացի շեմքին: Ներսում, բուխարու առաջ, կրակի լեզուների լույսի տակ, մոթալ փափախով, ալեղարդ մի տղամարդ զրկել ու շոյում ե եշով ճամբորդող վիրավոր կնոջը:

— Արմաւշ, Արմաւշ, Արմաւշ, աղջիկս, սիրուն և  
իմ թառլան դուշս, ձեն հանի... Եղ վմնց պատահեց...

Վիրավոր կինը չի խոսում: Նա միայն ծանր-  
տնքում ե, ուժասպառ շնչում:

Զբաղացի դուռը կոպիտ ճռուց ու բացվեց: Բու-  
խարուց հրեղեն լեզուների ստվերները հասան դուռը  
բաց անող հաստ շրթունքներով տղամարդու յերեսին:  
Կուրծքը ծածկված ե փամփուշտակալներով: Աչքերից  
կայծեր են թափում: Շատ ե հուզված:

— Հայկ, հնգեր Հայկ, այ մարդ, գժվել ես, վի-  
րավորին խտրտել ես ու քար կտրել, դրա յարեքը  
կապել ե պետք, — նորեկն ասեց ու մոտեցավ բու-  
խարուն:

Հայկը ոձից խայթվածի նման վեր ցաւկեց: Հետո  
դողալով. — Ո՞խ, քոռանամ յես. Արտաշ, յերեխիս  
յարեքը պետք ե կապել... Բայց ինչով...

Զեռքը տարավ դեպի միրուքը: Ինչ վոր լպրծուն  
ըան դգաց դեմքին: Զեռքը յետ քաշեց: Մատներն  
արնաթաթախ են: Յեվ միայն այդ վայրէյանին նկա-  
տեց նա, վոր եշով ճամբորդող կնոջ դեմքը պլոկված  
ե, կաշին քերթված: Իսկ իր դեմքը արյունոտվել ե  
այն ժամանակ, յերբ նա աղջկա գլուխը մուեցրել եր  
իր յերեսին:

— Արտաշ, Արտաշ, ինչով փաթաթեմ Արմուշիս  
յերեսը:

Արտաշը գլխարկը վերցրեց ու նայեց «Ինչպես  
յերեսում ե մեջը բամբակ ու նուրբ կտոր կա, պատ-  
ռեմ»: Յեվ Արտաշը իր գլխարկի մեջը պոկեց: Յերբ  
փափախի միջից հանած բամբակը դնում եր նա Ար-  
մենուհու յերեսին, արցունքի կաթիլները նրա մաղու-

այտերով վար հոսեցին ու շաղախէցին բուխարու առաջ թափված արնաշաղախ մոխրին։ Նրա այտերով ցոլացող արցունքի կաթիլները նման եյին յերկնքի պսպղուն աստղերի, վոր շողալեն թռչում են ու այլն չեն վերադառնում իրենց նախկին տեղերը։

Հայկն ու Արտաշեսը վորքան աշխատեցին վիրավոր կնոջը խոսեցնել, չհաջողվեց։ Նա յերբեմն աչքերը կիսով չափ բանում ե, վշտոտ հայացքով նայում հորը, հայացքը վար թողնում, մեկ ել նայում ու տնօրում...

— Մեջքս կոտրեցիր. Արմեւշ, սիրտս կըրակ տվիր, յես կկուրանամ։

Արմենուհու վերքերը կապեցին ու բուխարուց քիչ հեռու սղառկեցրին նրան։ Մի քանի վայրկյան չանցած, Արտաշեսը կանգնեց։ Նա մոտեցավ վիրավոր ընկերոջը։ Նայեց նրա կիսաբաց աչքերին։ Թառանչ քաշեց ու հեռացավ։

— Դուրս եմ գալիս յես, հնգեր Հայկ, խնդրում եմ քեզ մի քիչ... յես հիմի կգամ, տեսնեմ տղերքն ինչ յեղան։

Գնաց։

Հայկը յերկու ձեռքով իր ձերմակ զլուխը բռնեց ու սրտի խորքից ուժով՝ ինչպես ունելիյով ցավող ատամն ևն հանում՝ ծանր ախ քաշեց.

— Ու, հեղափոխություն, հեղափոխություն, շնորհակալ եմ քեզնից տվածդ վերջին նվերի համար... Միայն չոր զլուխս թողեցիր ինձ... Ուխ, բնավ, բնավ դու ինձ չես սարսափեցնի... վորքան ել դաժան լինես, յես կգամ քու յետեից... Յես կմտնեմ քո սիրտը... Վոսկորներս ու մկաններս կայրեմ պարավողիդ վառարանում, շողի կտամ նրան, վոր չկանգնի...»

Զըաղացի դուռը նորից ճռաց: Ներս մտան մաշած տրեխներով յերկու հոգի: Նըանք մոսինները բուխարու մոտ հենեցին պատին ու մոտեցան վիրավոր կնոջը:

— Արմնւշ, Արմնւշ, աղջիկս, մի աչքդ պաց, քու դային եմ, Հանես դային... Սիրուն դնւշ, Արմնւշ...— Ցեզ նա յերեսը շուռ տվեց դեպի դուռը:

— Քեռի Հայկ, դարդ մի անի, Արմենուհին կլավանա, իսկ Մեժլումբեկանց Արշակին ու նրա դաշնակցականներին մենք մինչև մի շաբաթը ցույց կտանք,— ձեռքերը Հայկի նեղ ուսերին դնելով ասեց նորեկը, վոր ավելի յերիտասարդ եր, — դարդ մի անիլ, Արմենուհուն կառողջացնենք, դաշնակների փոշին յերգինք կհանենք: Ինքդ ես մեզ ասում թե՝ մեր գյուղացին բռնակալ դաշնակցական իշխանության լուծը տանողը չի: Ինքդ ես ասում, թե գյուղացին մեռնում ե, նրան հող, խաղաղություն ու հանգստություն ե պետք ե նա շուտով սուրը ձեռքին վոտքի կկանգնի ու ձեռք կբերի այն, ինչ վոր իրեն հարկավոր ե:

— Հանա, շուտ կլավանա... Գագիկ, Արմուշա շուտ կլավանա: Ո՞խ, ենպես բան ես ասում, կարծես դեռ նոր ես թողել Արեստավորական դպրոցի նստարանը: Գագիկ, մեռելները հարություն չեն առնում:

Հանեսը մոտեցավ ու Հայկի կողքին նստեց:

Գագիկը յերկու քայլ առաջ գնաց, կըկին նայեց պառկած Արմենուհուն: Ցետ դարձավ:

— Ուշանում են, չեկան տղերքը: Քեռի Հայկ, նու յես միայն այն եմ հիշում, վոր Արմենուհին հինգվեց տարեկան յերեխա յեր, Թիփլիսից յեկար գյուղ ու նրան ամբողջ ընտանիքի հետ տարար: Նու յես

միայն այդ եմ հիշում, Զարմանալի յե... Հետո ինչ  
յեղավ նա, բան չգիտեմ։ Մի պատմի տեսնենք, ինչ-  
պես ե Արմենուհին այս որին հասել։

— Հայկն, Գագիկը լավ ա ասում, յես ել շատ  
բան չեմ գիտում, պատմիր։ Պատմիր լսենք, գուցե  
սրտներս մի քիչ թեթևանա։

Հայկը գլուխը վեր բարձրացրեց։ Հայացը նետեց  
վիրավոր աղջկա կողմը։ Խորը թառանչ քաշեց։

— Տղերք, դե վոր խնդրում եք, պետք ե պատմեմ։  
Ո՛խ, պատմեմ իմ հերոսական աղջկա մասին։ Իմ սիրտն  
ել կթեթևանա։

## 5.

Հայկը յերկու ձեռքով գլուխը բռնեց ու մռայլ  
խոսեց։

— Ուզիղ տասնութ տարի առաջ եր, վոր այս  
ջրաղացի մոտովս անցնող կածանով ընտանիքս Թիֆ-  
լիս փոխադրեցի։ Են ժամանակ յես աշխատում եյի  
Թիֆլիսի յերկաթուղային վերանորոգման արհեստա-  
նոցներում։ Արդեն կապված եյի սոցիալ-դեմոկրատ  
կուսակցության հետ։ Յերբ ընտանիքս փոխադրեցի  
Թիֆլիս՝ տունս մեր խմբակի ժողովատեղին դարձավ։  
Են ժամանակ Արմուշս դեռ վեց տարեկան եր։ Հենց  
առաջին տարին նրան ուղարկեցի դպրոց։ Փոքրիկ  
Արմուշս շատ ե ոգնել մեղ թռուցիկներ ու զանազան  
գրականություն փոխադրելու՝ տնից տուն։ Արդեն նա  
տասներեք տարեկան եր, վոր ինձ ընդհատակյա աշ-  
խատանքի համար, Նավթլուղ կայարանում բռնեցին  
ու մի տարով բանտ դրին։ Բանտից դուրս գալուց  
հետո, վերանորոգման արհեստանոցներում ինձ գործի

Հընդունեցին: Ո՞խ, ընկերներ, ծանր որեւ եյին...  
Մարդ վախենում եր փողոցում հեղափոխական բառը  
բերանից հանելու: Ժանդարման արթուն շան պես  
հսկում եր: Ո՞խ, եղանակ, բանտից վոր դուրս յեկա,  
ընկերներից մի քանիսը ձերբակալված եյին, շատերն  
ել փոխադրվել եյին Բաթում կամ Բաղու: Զգիտեյի  
ուր գնամ: Վերջապես նամակ ստացա: Առաջարկվում  
եր ինձ աեղափոխվել Ալեքսանդրոպոլ, դեպոյում կու-  
սակցական աշխատանք կատարելու:

Ընտանիքը թողեցի Թիֆլիս ու փոխադրվեցի Ալեք-  
սանդրապոլ:

Աշխատանքի ընդունվեցի Ալեքսանդրապոլի դեպո-  
յում, վորպես ավագ տոկար: Մի տարի աշխատեցի:  
Կրկին ձերբակալեցին: Վեց ամիս նստելուց հետո,  
ազատ արձակեցին: Ո՞խ, ես ի՞նչ եմ պատմում, դուք  
ինձ խնդրում եք վոր Արմուշիս մասին պատմեմ, իսկ  
յես ուրիշ բան եմ ասում: Եղանակ ասեցի,  
ընտանիքս թողել եյի Թիֆլիս: Եղ ժամանակ Ար-  
մենուհին սովորում եր ազգային որիորդաց դպրոցում:  
Նա դեռ դպրոցական աշակերտուհի յեր, վոր քրքրում  
եր հեղափոխական հոր թղթերը, թուցիկները կար-  
դում ու վոգնորվում: Լուրջ հսկում եյի, վոր աղջիկս  
որիորդաց դպրոցում, ազգայնական ճահճնը չընկնի:  
Յեվ այդ ինձ հաջողվեց:

Ո՞խ, զլուխս վորտեղ ե, վորքան ցրված եմ պատ-  
մում: Ինչպես ասեցի, Ալեքսանդրապոլում մի տարի աշ-  
խատելուց՝ հետո, ինձ ձերբակալեցին: Յերբ դուրս յեկա  
բանտից, ես անգամ հաջողվեց ինձ ելի դեպո ընդունվել:  
Աշխատեցի յերկու տարի: Արմուշն արդեն դպրոցն ավար-  
տել եր: Ընտանիքս փոխադրեցի Ալեքսանդրապոլ:

Դեպոյում մի շատ խելոք աշակերտ ունեիս Առողջ,  
յեռանդուն մի պատանի յեր նա, Անունը Վասյա յեր,  
ազգանունը Սամարսկիյ: Ռոստովից եր յեկել: Բունտ  
սարքելու համար գիմնազիայի հինգերորդ դասարանից  
Սամարսկուն դուրս եյին շպրտել: Վասյան իմ աշա-  
կերտն եր: Ընտանիքս Թիֆլիսից Ալեքսանդրապոլ փո-  
խադրելուց հետո, Վասյան ինձ մոտ եր մնում: Ար-  
մուշը կայարանում ընդունվել եր աշխատանքի: Հայ-  
կական դպրոցում ուսուցչուհի յեր: Արդեն նա մեղ  
հետ գաղտնի աշխատում եր: Փետրվարյան հե-  
ղափոխությունից առաջ, մի յերեկո, յերկու ջահել-  
ները՝ Վասյան ու Արմուշը տանը մոտս նստել են ու  
բարձր-բարձր ծիծաղում: Մնացել եմ զարմացած:  
Զգիտեմ ինչ են ուզում ինձնից: Բարկացա: Լրջացան:

— Ընկեր Հայկ, պապաշա, մենք ուզում ենք ամուս-  
նանալ, — Վասյան ասեց ու ամոթից գլուխը կախեց:

Ինչ պետք ե անեյի: Բոնեցի ու յերկուսին ել  
համբուրեցի:

Ալեքսանդրապոլում կատաղի սառնամանիք եր:  
Յեթե չեմ սխալվում, հունվարի քսանին եր: Մեր  
տնում բջիջը գաղտնի ժողով եր հրավիրել: Ժո-  
ղովը նվիրված եր 1905 թվի ձմեռը Պետրոգրադի փո-  
ղոցներում զոհված բանվորների հիշատակին: Մի ուրիշ  
անգամ եղ առթիվ կխոսենք: Հա՛, ինչ եյի ուզում  
ասել: Հիշեցի: Ժողովը վերջացավ: Ընկերներն ուզու-  
եյին ցրվել: Մեկ ել դրսից դուռը ամուր-ամուր ծե-  
ծեցին: Իմացանք, վոր ժանդարմական վոհմակն եւ:  
Լուսամուտով բոլորս դուրս փախանք: Տանը մնաց  
միայն Արմուշը: Մենք դուրս ենք գալիս, նա դուռը  
բանում եւ, ժանդարմաները ներս են մտնում ու ապ-

շում: Նրանք պահանջում են Արմուշից, վոր հայտնի, թե ուր փախան ժողովականները: Աղջիկս պատասխանում ե, վոր տանը վոչ մի ժողովական չի յեղել ու թող պարոն ժանդարմները բարեհաճեն դուրս գալ տնից: Նրանք խուզարկություն են կատարում: Մի քանի կտոր բրոշյուրներ են գտնում՝ ոռցիալ-դեմոկրատ կուսակցության հրատարակությունից: Արմենուհուն տանում են:

Մյուս որը առավոտյան իմացանք, վոր աղջիկս բանտումն ե: Ո՞ս, մոռացա ասել, վոր կինս արդեն մահցել եր թոքախտից, իսկ յես նույնպես թոքախտով շատ ծանր հիվանդ եյի:

Յերբ Արմուշին բանտ տարան հիվանդությունս ավելի սաստկացավ: Վասյայի ու մյուս հնգերների համար Ալեքսանդրապում մասալը միանդամայն անհնարին եր: Վասյան փոխադրվեց Թիֆլիս: Մնացի մենակ: Գործի չեյի գնում:

Պատերազմի սարսափները, հիվանդությունս և աղջկանս բանտարկվելը ուժ չթողեցին ինձնում: Յեվ ահա եղ հուսահատական որերին հասավ փետրվարյան հեղափոխությունը: Արմուշը բանտից դուրս յեկավ մարտին: Յես արդեն հյուծված եյի: Վասյան Թիֆլիսից վերադարձավ: Հնգերները հավաքվեցին: Բոլորը գործի անցան, բացի ինձնից: Աշխատանքը կենտրոնացած եր յերկաթուղային բանվորների և զորքի մեջ: Աղջիկս իսկական հերոս եր դարձել: Ամեն տեղ հնչում ու վորոտում եր նրա ձայնը:

Կարծեմ հույսին եր: Բժիշկները գտան, վոր շուտով յես կմեռնեմ: Նրանք խորհուրդ տվին ինձ վերադառնալ ծննդավայրս, «գուցե լեռների ջուրն ու

ողը մի քանի տարով կյանքս յերկարացնիւ։ Վասյան,  
հիշում եք, ինձ մինչև գյուղ ուղեկցեց։ Հանես, դու  
ծանոթ ես նրան։

Զգիտեմ այնուհետեւ աղջկանս ու փեսիս ինչ պա-  
տահեց։ Ո՞խ, չե՛, սեպտեմբերի վերջերին փող ու նա-  
մակ ստացաւ Գրում ելին, վոր Բազկումն են, աշխա-  
տում են բոյլշեկիների հետ Յերկար ժամանակ նրան-  
ցից տեղեկություն չունեյի, մինչև վոր Բազուն ընկալ  
տաճիկների ձեռքը։

Բազվից յեկող աղաները պատմեցին, վոր Վասյան  
սպանվել ե Հաջի-Կարուլ կայարանում՝ տաճիկների  
դեմ կովելիս, իսկ Արմուշը գնացել ե Ռուսաստան։

Ձեզ հայտնի յե՛, թե ինչպես յես առողջացաւ Ասենք  
ելի հիվանդ եմ... Բայց աշխատում եմ... Նու, յես  
մոտ յերկու տարի վոչ մի լուր չստացա Արմուշի մա-  
սնին։ Աղըքնանը խորհրդայնացավ։ Հենց վոր մեր զա-  
վառում յերևացին Կարմիր Բանակի ներկայացուցիչ-  
ները, սիրտս դող ընկալ։ Մի տեսակ բնազդս ասում  
եր, վոր աղջիկս եսոր կամ վաղը կգա։ Արանից յերկու  
ամիս առաջ, յերբ սահմանն անցանք ու գնացինք  
Թոռուզ խորհրդակցության, ինձ հետ մի զարմանալի  
դեպք պատահեց։ Հիշում եք, մեր զեղից յես ու Ար-  
տաշն ելինք գնացել զավառային կարմիր պարտիզան-  
ների խորհրդակցությանը։ Թոռուզ հասած որը յերե-  
կոյան Գյումրեցի Արտավազդը ժողովը բացեց ու  
հայտարարեց, թե «Կարմիր Բանակի կողմից վողջունի  
խոսք ե տրվում ընկեր Արմեն Սուլթանյանին»։

Ի՞նչ։ Ականջներիս չեմ հավատում։ Ո՞վ ե այդ  
Արմեն Սուլթանյանը։ Յեվ ահա հանդես յեկալ բար-  
ձրահասակ, շինելը հագին, փափախով, մառազերը կող-

զին, թուվս դեմքով մի զինվորական։ Մնացել եմ շվարած։ Աչքերն իմ Արմուշինն են, բայց ինքը բոլորովին կնոջ նման չի։

Գլուխս տժժում եւ Զիմացա, թե ինչ ասեց բարձրահասակ զինվորականը։ Յերբ վերջացրեց նա, մոտեցա։ Նայեց ինձ, նայեց ու առաջ վազեց։ Դրվեցինք։

Իրար խըտըտեցինք։

— Վաս, պապա ջան, ինչ առողջացել ես, յես կարծում եյի, թե դու չկաս... իսկ տեսնելմ ես աղջիկդ կրասնիյ կամանդիր ե դառել։

Ժողովից հետո միայն մի ժամ հաջողվեց միասին մալ։ Յես, Արտաշը ու Արմուշը նստեցինք Թողովի Հեղկոմի շենքի բալկոնում՝ ու զրույց արինք։ Նա պատմեց իր մասին շատ քիչ։

«Հետո, պապա ջան, հետո կպատմեմ աղջկանդ կատարածների մասին, դեռ համբերի» — ասեց նա։ Արմուշ ամբողջ ժամանակ խոսում եր Հայատանի խորհրդայնացման խնդիրների մասին։

Եղ գիշերը յես ու Արտաշը նրան թողինք Թողովուգում ու դուրս յեկանք։ Ահա սա ել յերկրորդ անգամ ե, վոր հանդիպում եմ աղջկանս՝ կրասնիյ կամանդիրին։

Հայկը կրկին նայեց վիրավոր աղջկա կողմը և խորը, խորը թառանչ քաշեց։

## 6.

Արտաշեսը վերադարձավ։

Մյուսները յեկան նրա յետեից։ Յեկողները առաջ նայում են վիրավոր Արմենուհուն ու հետո խմբվում բուխարու շուրջը։

Մի քանի վայրկյան չանցած ջրաղացումն այլևս  
շարժվելու տեղ չկա։ Քսանյերկու տղամարդ՝ վորոնցից  
յել կուսը զինվորականներ՝ դաշնակցական բանակից,  
պայտաձև նստել են բուխարու առաջ ու վիճում...  
Բոյլշեիկյան բջիջի ընդհատակյա նիստը ծփում եւ  
կրակի ծխախառը լույսի տակ բոյլշեիկները իրար  
հազիվ են տեսնում։ Խոսում են կամաց, կարճ ու  
խիստ։ Նրանցից համարյա թե կեսը բջիջի անդամ-  
ներ չեն, միայն նոր են ծանոթացել բոյլշեիկյան  
ծրագրին, սակայն խիստ հակադաշնակցականներ են ու  
վստահելի։

Փալանը պատռել են։ Սահմանից այն կողմն ապաս-  
տանած կոմիտեյից ուղարկվել են զրականությունն,  
թուցիկներ, կարմիր բանակի կողմից կոչեր՝ ուղղված  
գյուղացիներին, և գավառի ապստամբության ծրա-  
գիրը։ Իսկ Արմենուհի Սուլթանյանը կոմիտեյի հա-  
տուկ լիազորի պաշտոնով գործուղղված ե Բոխու-  
տի շրջանը՝ գործն անմիջականորեն ղեկավարելու  
համար։

Ապստամբության որը նշանակված ե մի շաբաթ  
հետո։ Հրահանգում են ուժեղացնել դաշնակցական  
բանակում տարվող աշխատանքը։ Հայտնում են, թե  
գյուղի ընդհատակյա կարմիր պարտիզանական ջոկատը  
յերբ պետք ե գործի անցնի ու կարմիր բանակի մա-  
սերը յերբ ոգնության կհասնեն։ Ժողովը կատաղած  
ծով ե։ Նախագահը կատաղի ալիքների գրկում հազիվ  
ե պահում իրեն իր դերում։ Մի մասը պահանջում ե  
հենց այս գիշեր գործի անցնել։ Դյուղը հուզված ե։

Դյուղը սիրով կընդունի նոր կարգերը։

Գյուղացու հուզված տրամադրությունը պետք է  
սպագործել:

Բառը գնդակ եւ «Զեն» թրի պես կտրում եւ վո-  
մանց սիրտը:

Գյուղում հրացան եւ ճայթում:

Նախագահը չդիտի, թե ինչ անի: Նրա դեմքը այլ-  
վում եւ:

Արտաշեսը պղձահանքերում, հրալեզու ձուլարանի  
առաջ, յերբեք այդքան ջերմություն չի զգացել:

— Հնգերներ, իսկապես զյուղացիների զայրույթը  
դաշնակցականների նկատմամբ կարելի յեւ շատ լավ  
ոգտագործել... Բայց ինչ անենք, ամբողջ գավառում  
նույն զբությունը չի, ինչ վոր մեր գյուղումն ե...  
Հետո, մենք սահմանի են կողմից կարգադրություն  
ունենք... Կարող ենք գավառի ապստամբության ընդ-  
հանուր ծրագիրը ծռել...

Բոլորը լուռ են:

Նախագահ Արտաշեսը դիտում եւ ընկերներին —  
Նրանք հուզված են, մտածկու ու կնճռաճակատ: Ար-  
տաշեսը նայում եւ պատի տակ կիսախավարում պառ-  
կած ընկեր Արմենուհուն: Թվում եւ թե մերձիման  
հիվանդից ոգնություն եւ խնդրում: Իսկ Արմենուհին  
վոշինչ չի զգում: Մի ժամ առաջ միայն նրան փախ-  
ցրին կալանատնից:

Գուցե մեռնի: Նա այնքան թույլ եւ թշնամին  
Արմենուհու վոսկորները փշրել եւ, կուրծքը դանակով  
արյունոտել: Արմենուհուն չկարողացան բժշկի մոտ  
տանել: Վտանգավոր եւ, բժիշկը մոլի դաշնակցական  
եւ իսկ այդպես՝ գուցե մեռնի:

Արտաշեսը ջրաղացում սիրող լուսթյունը խախտեց:

— Կսեցեք... հերթեվ... սկսած... Հնգերներ — մատերը ճմռելով՝ ընդհատակյա ժողովականներին կարգի հրավիրեց Արտաշեսը՝ չնայած այն բանին, վոր ծալտուն չկա, լուսթյունը մարդ եւ խեղդում: — Բայց, հնգերներ... ըստեղ վաժնի յեւ դաշնակցական պոլկից յեկած հնգերների կարծիքը: Վաժնի յեւ իմանալ, քանի զինվոր մեջ կմիանան: Խոսքը տալիս եմ աղիտատոր հնգեր Բարսամյանին:

Անմիջապես վար հառած արծվի աչքերը բարձրացրեց յենթասպայի ուսաղիրներով զինվորականը, վոր մինչև այդ լուր եր:

— Յես, ընկերներ, իմ տրամադրության տակ ունեմ վաթսուն սվին, մի ամբողջ ջոկ առաջին վաշտում ու մեկական դասակներ յերկրորդ ու յերրորդ վաշտերում: Չեմ հաշվում նրանց, վորոնք տատանվում են: Հայտնում եմ, վոր ինձ համար անհնարին ե այլևս գնդում մնալը, ամեն ինչ պարզվում ե... Միայն այն ժամանակ գունդ կդնամ, յերբ կկարգադրեք զնալ ու ղենքի դիմել...

— Վասյա, Վասյա Սամարսկիյ, ընկեր, — հանկարծ բարձրացավ կիսախավարում պառկած Արմենուհու ձայնը: Բուխարու շուրջը պատած ժողովականները ցնցված յետ նայեցին:

Միթե Արմենուհին խոսեց, յերեի լավանում ե:

Հայկը մոտեցավ աղջկանը ու զլուխը գրկեց:

— Արմաւշ, Արմաւշ, ի՞նչ եյիր խոսում, ի՞նչպես հիշեցիր Վասյային:

— Յերեի շուտով կմեռնի, մեռելների հետ և խոսում, — ասեց Գաղիկը կամաց, վոր Հայկին լսելի չլինի:

Արմենուհին հորը չպատասխանեց: Նրա լեզուն,  
ինչպես միշտ, կապված է: Իսկ աչքերի առաջով՝ առաս-  
տաղի վրայով հոսում են արյան գետեր ու նրանց  
յետելից խավարապատ ամպեր:

Հայրը յետ դարձավ իր տեղը:

— Զե, մարդ ենք ուղարկում բոլոր գյուղերը,  
հայտնում ենք սահմանից են կողմը և այս գիշեր լու-  
սաբացին պարզում ենք ապստամբության սուրը: —  
վճռական ասեց Արտաշեսը, — ճիշտ ե, ժողովի համար  
դժվար ե խախտել ամբողջ գավառի ապստամբության  
ծրագիրը, բայց ինչ արած, պայմանները ստիպում են  
եղան վարկել:

— Զենք կարող, կպարտվենք, որի կքաշեն մեզ, —  
պատասխանեց Գագիկը:

— Լոյն... Հեղափոխականը մահից չի վախենում, —  
մոայլ դեմքը բարձրացնելով վճռական գոչեց Հայկը:

— Գործը խարաբ կանեք, Կոմիտեյի վորոշմանը  
դեմ ենք գնում, մի գյուղ խլելով բան չի դուրս գա, —  
հուսահատ շարունակեց Գագիկը:

— Բոլոր ել գիտում ենք, վոր Կոմիտեյի վորոշ-  
մանը դեմ ենք գնում, համա Կոմիտեն, վոր մեր դրու-  
թյան մասին իմանա, անպատճառ կհամաձայնվի:

Յեվ նիստը ծփում ե, ալեկոծ մոնչում:  
Դրսի ժամապահը հայտնեց, վոր գյուղում մնացած  
ընկերը յեկել ե և ուզում ե շտապ տեսնվել: Արտա-  
շեսը կարգադրեց ներս ընդունել նրան:

Բջիջի անդամ, կռնատ Բագրատն ե: Գյուղում  
թողել են՝ լուրեր վորսալու համար:

Բագրատը մտավ ջրաղաց: Ամբողջ մարմնով դո-  
ղում ե:

— Գեղը կրակի մեջ առ Մեծլումբենի տղան տունս  
վառեց, Զարուհուս մահուզերով սպանեց: Ոպիսկ են  
անում, տուն ու տեղ թալանում, ջահիլ կնանունց ան-  
պատվում... ըրեխաները տներից դուրս են թռչում  
ու կորչում: Դյուղացիները հուզված են, կեռիք են  
դրճացնում: Հիմի յել գշերվա կեսին դաշնակցական  
վայեննի կոմիտեն Ըրեանից պրիկազ ա տվել, վոր մի  
սհաթվա միջում պոլկը գեղից հեռանա: Առաջ են  
գնում, կռիվ են գնում... Զինվորները գեղը թալա-  
նում են: Գեղացիները գաղազած են:

Բաղրատի խոսքերը կիսախավար անկյունում պառ-  
կած Արմենուհուն շունչ տվին: Նա աշքերը լայն բաց  
արեց ու դիտում ե Բագրատին:

— Հենց այժմ անցնում ենք գաղազած դյուղա-  
ցիների գլուխը: Բայց հնգեր Բարսամյանի գործն ավելի  
մեծ ե: Նա պետք ե իսկույն զորքի մեջ ոռումը պայ-  
թեցնի: Պետք ե զորքը խուճապի յենթարկել: Պետք ե  
կազմակերպել կարմիր գունդ, — գոռաց Հայկը: Նրա  
ձայնը պղնձի պես առույգ դընգնգաց:

— Հնգերներ, և ե համաձայն հնգեր Հայկի առա-  
ջարկին, թող մատ բարձրացնի:

Հայկը դիտեց շուրջը: Հաշվեց բարձրացրած մատերը:

— Նշանակում ե վեց հոգի դեմ են: Առաջարկին  
համաձայն են տասնվեց հոգի:

— Ի՞նչո՞ւ յենս — լսվեց խավար անկյունից, —  
յենս տասսյոթեներորդը...

Հայկը յետ նայեց:

Ողում բարձրացել եր Արմենուհու արյունոտ  
ձեռքը: Նա այնքան տպավորիչ եր, վոր կարծես խա-  
վարում պարզված կարմիր դբուշ լիներ:

Հայկը դողաց։ Յերեսի վրա ընկալ աղջկա վրա։ Նա չնկատեց, թե ինչպես վիրավորն իր ձեռքը վար թողեց և աչքերը փակեց։ Արմենուհու աչքերն այս անդամ փակվեցին ընդմիշտ։

— Զենքին, — գոռաց Արտաշեսը, — հնգերներ, զենքին, չնգեր Բարսամյան, ոգնականիդ հետ վազիր պոլկը... Աշոտ, Ակոբ, Սարգիս, դեպի ձիյերը, դեպի հարեան գյուղերի յաշեյկաները։ Վասակ, անմիջապես սահմանն անցնում ես, գիտում ես, թե ում պետք է հայտնես։

Դեպի վերջին ու վճռական կոիվ։

Ատրճանակները մերկացրին ու ջրաղացից դուրս յեկան։ Արտաշեսը մոտեցավ, Հայկի ուսով շրթունքները մոտեցը Արմենուհու գլխին։ Կրկին յետ դառավի։ Գլուխն որորեց։ Դուրս գնաց։

Հայկը մենակ մնաց։ Գլուխը վեր բարձրացրեց։ Աչքերը լճացել են։ Դեմքը մթին ե ու մուայլ։

— Իմ անուշ, իմ իգիթ աղջիկ, ընչեր ասես, վոր չի տեսել քո հայրը։ Ամբողջ կյանքը տվել ե հեղափոխությանը։ Զբկվել ե առողջությունից, ընտանիքից, կնոջից ու վերջն ել քեզնից։ Ինչու նա եսքան դժբախտ ե։ Ո՞խ, չե, նա դժբախտ չի։ Նա հասնում ե իր մուրազին, միայն Արմուշը չի լինի, վոր տեսնի հոր ու իր պայքարի պատւղները...»

Հայկը կանգնեց։

— Զե, Արմուշ, դու հանգստացիր, քո հորն սպասում են դաշնակի կրունգի տակ ճգմվող գյուղացիները։ Մնաս բարե՛, յես գնացի... Մնաս բարե՛...

Ցեվ նա դուրս յեկալ ջրաղացից։

Լուսինը սիրուն շողում ե, լուսավորում սարերը, ձորերը, ժայռերը։

Բոյլշևիկների քաջիջը գյուղղ մտնելուն պես, խըմբեց հուզված, գազազած գյուղացիներին ու անցավ գործի:

Լուսինը անուշ ժայռապվ վերից լուսավորում է խուճապի մատնված փախչող խմբապետներին, զորքին ու նրանց հալածող կարմիր դրոշի տակ մտած գյուղացիներին:

Անշափ սիրուն ե գիշերը, և վոսկեթուշ խնձորի պես կլոր ե լուսինը:

Փախչող գնդացիրները ճարճաթում են՝

— Թախկ... թախկ... թախկ... թխկ, թխկ, թխկ...

Գնդակները գիշերային լուսնազոծ ողում ճախրում են՝

— Վզզզզ... վզզզ... վզզզ...

Վիրավոր ընկած ձիյերի խրինջոցը գնդզընզում և ժայռերում:

Զորքը հասավ անտառի բերանին: Կարծես թե կործանման վտանգը թեթևացավ: Բայց ապստամբները վագրի նման ցատկում են առաջ... Նրանց ձեռքից հազիվ թե դաշնակը ազատվի...

Բարձր հրամանատարությունը և դաշնակցական գործիները փախչում են առաջից: Նրանք կարդադրել են, վոր գյուղացիները միշտ լինեն իրենց յետերից: Հրաձգային ջոկերն աշխատում են յետ շմալ գնդացիրներից: Վերջին շարքում ճղում են միջակ ուստորին հրամանատարները: Նրանք գնդակ ու հայնոյանք են թափում յետ մնացող զինվորների գլխին: Մսագործի աչքերով սպան մառզերը ձեռքին վագրի ճանկերից փախչող գայլի նման հուսահատ վոռնում ե...

— Յետ մնացող կամ փախչող զինվորին գնդակահարել... ձեր մեե... շուն շան վորդիք... առագ... Ներսիսյան, չես ուղում փախչել, մնում ես... առա հա, մառւզերը քեզ թող դատի...

— Վաճախ... ջուր... կուրծքս... — Ներսիսյանը փովեց զետնին:

Բայց մառւզերով ջոկապետը չի նկատում, թե ինչպես զինվորները մեկ-մեկ փովում են գետնին: Փովում են գետնին ու սող են տալիս յետ, դեպի դյուղը, դեպի ապստամբները: Հասնում են նրանց, Միանում են: Ու գրոհի յեն նետվում նոր թափով, նոր նպատակով, նոր վրեժով...

Վերջին շարքը դեկավարող ջոկապետը նայվածքը սրեց մի կետի: Ահա բլրի կատարից դեպի կիրճն են սողում ինչ վոր ստվերներ: Սողում են... չորս հոգի ուժով քարշ են տալիս մեկին...

Ջոկապետը նետվեց նրանց կողմը: Մոտեցավ: Կանդ առավ: Խոսում են: Նրան, վոր քարշ են տալիս, խոսում ե...

— Դավաճան զինվորներ... տանում եք, վոր ինձ վաճառեք մուսավաթիսո - բոյլեկիկներին... Արշակ Մեժլումբեկյանին սպանելով դաշնակցությունը չի...

— Ըստիսը փակի, վոր ձեն չհանի, — փնտնթաց քարշ տվողներից մեկը:

— Ովքե՞ր եք... սրիկաներ... ուր եք տանում պետին... թհւրքի շպիոններ... — գոչեց մսագործի աշքերով ջոկապետը և մառւզերը մեկնեց առաջ, վոր կրակի... Յետնից ծանր մի կոճդ հասավ ձեռքին:

— Կամաց, քեզ ու քու պետին գեղը շանց կտա, թե ով ա թհւրքի շպիոնը, — և վերջին փամփուշտը

(154.)

A

կրակած մոթալ փափախով գյուղացին չոքեց ջոկա-  
պետի կը ծքին...

Պետին քարշ տվող զինվորները մոտեցան:

— Հնգեր... յերրորդ վաշտից ենք, հնգեր Բարս-  
սամյանը մեզ կճանաչի... Փախել ենք ձեզի միանալու:  
Հնգեր, մենք պետին առաջին շարքեն ենք գողացե...

Այդ միջոցին վերև բլրի գագաթից Արտաշեսը  
բարձր, բարձր բացականչեց.

— Եյ հեեեիյյյ, հնգերնեեերը, մերունք բոլոր  
պուլիմուները խլեցիիին... Եյ հեեեյյյ, դորքի շատ  
էլ սը մեզ միացանալ...

\* \* \*

Լուսնի մայրամուտից հետո, գյուղում արե ծագեց  
ու արեի հետ Հեղափոխական իշխանություն: Իսկ արեի  
մայրամուտին Հեղկոմը կարմբադրոց գյուղացիների  
գլուխն անցած, ջրաղացից դուրս բերեց հեղափոխու-  
թյան աղջկա՝ եշով ճամբորդող կնոջ մարմինը: Այդ  
յերեկո, գյուղի կենտրոնում, հրապարակում նրա  
դիակը հանձնվեց հողին:



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220039215

